ՏԱՐՈՍ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԹԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկ. 12 »
» » վեցամսեայ 6 »

ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է ղրկել հետեւեալ հասցէով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և Խմբագիր Տաւրոս շաբաթաթերթի

Х. Чакжрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՓԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկած գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ։ Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ ետ չեն տրուիր։
Դանուցման տողը 20 սնթ.։ Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն։ Դանուցմունք կ'ընդունուին ամէն լեզուաւ։

Ա. ՏԱՐԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ 21 ԱՊՐԻԼ 1898 — ԹԻՒ 10

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր վիճակը արդէն խոստովանած ենք և նորէն կրկնելու հարկ չենք տեսներ։ Հանգամանքներու առջեւ ստիպուած ենք շատ տեղեր «Տաւրոս»ը ձրի ղրկել, որպէսզի անոր տարածութիւն գտնելովը՝ Հայ Ժողովուրդին ճակատագիրը իրենց ասպարէզ ընտրող դիմակաւորներուն վարագոյրը ծղրիկ ծղրիկ պատռի վար իյնայ, եղբայրասպանութիւնը դադրի, միութեան հոսանքը զօրանայ, ընդհանուր Հայկական Կազմակերպութեան ջուատիոյթ գոյութեամբը գօտեպնդեալ՝ կատարեալ հաւատքով և հաստատուն յոյսերով բոլորուինք Հայրենիքի և Ազգին փրկութիւնը խոստացող սեղանին շուրջը։

«Տաւրոս» իր տարած բարոյական յաղթանակին վրայ ուրախ է, իսկ նիւթական պակասութեան առջեւ կը նեղուի, կը չարչարուի, ուստի պարտաւորուած դիմում կընենք և կը խնդրենք որ «Տաւրոս»ի ուղղութեան համակիր և միանգամայն նիւթապէս ալ կարող բարեկամք իրենց յօժարակամ նպաստներով օգնութեան հասնին մեզ։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Նախ և առաջ թիւրիմացութիւն մը բացատրած ըլլալու համար, կուզենք քանի մը խօսք ընել։

Թէ՛ «Կատակ»ի և թէ «Տաւրոս»ի միջոցով երբէք նախատած կամ անարգած չենք այն անձնուէր նահատակները, որոնք հայրենասիրական ոգիով մը գործիք լինելով ուրիշներուն, ժամանակէ առաջ և բոլորովին պարապ տեղը զոհուած են. մինչդեռ խոհեմ և անշահասէր ղեկավարուելով բուն ժամանակին և բուն տեղը՝ միևնոյն անձնուիրութեամբ, արդարեւ հերոս և դիւցազուններ կը դառնային։ Մենք՝ ցաւելով այդ վայրապար զոհերու վրայ։ մեղադրած ենք ու կը մեղադրենք ոչ միայն անոնց անձնուիրութիւնը չարաչար գործածողները, այլ եւ ամբողջ ազգի մը ճակատագիրը իրենց եսին ու շահուն խաղալիք ընողները։

Մեր բոլոր քննադատութիւններու ժամանակ, խարազանի տակ ինկածը Հնչակեան և Դաշնակցական անունները եղած են. անուններ՝ որոնք իրենց ծրագիրներով, վարդապետութիւններով, աւելի ևս անիշխանական տխմար ցոյցերով ոչ միայն պետութիւններուն, այլ եւ ընդհանուր քաղաքական աշխարհին հակակրանքն ու զզուանքը գրգռած են. վկայ՝ պետական պաշտօնական յայտարարութիւնները, երեսփոխանական ժողովներու մէջ խօսուածները, լրագիրներու կարծիք, եւայլն, որոնք միահամուռ պարսաւեցին այդ կուսակցութիւններուն արարքը, պարզապէս հայկական ինքնավարութեան մաքուր և արդարացի խնդիրը ծայրայեղ անիշխանականներու համար դառնալիք ոլշ և ասպարէզ համարելով. հայկական ինքնավարութիւնը վտանգ մը համարուեցաւ Եւրոպայի առջեւ, և հետեւաբար, զուրկ մնաց այն պէսք եղած պաշտպանութենէն։

Մենք՝ Դաշնակցական կամ Հընչակեան ըսելով, մանաւանդ ընել ուզած ենք, Պիւրօ և Կեդրոն ըսուած ան մութ տեղերը, ուր լարուած է հայ ժողովուրդը ոչխարի պէս ջարդել տուող մեքենան. Ցաճկատանի հայերը, արդարեւ, նեղուած թուրք բարբարոսութեան ճնշումին տակ, ազատուիլ կ'ուզէին, հայ անձնուէրը հայրենիքի փրկութեան համար իր արիւնը վաթել կ'ուզէր, հայ դրամատէրը ու հայ մշակն ալ իր դրամը տալ կ'ուզէր, և ահա այդ Պիւրօ և Կեդրոն ըսուած մեքենաներուն բոկը անցաւ անոնց վիզերուն, քաշեցին տարին իրենց ուզած տեղը, դէպի կորուստ և դէպի թշուառութիւն։ Մեր այս ըսածները աշխարհին ծանօթ կենդանի փաստեր են և ոչ «իրաւունք»ի խրմբագրին հասկցածին պէս պատմիչ կամ փիէսիչ։

Հնչակեան կամ Դաշնակցական անունները տալով, երբէք մեր Ցաճկահայ եղբայրները ակնարկելուզած չենք, որոնք բնաբեմտաբար համակրած ու հետեւած են մէկ քանի կաւկասցի հայերու սարքած կուսակցական անուններուն, ու իրենք զիրենք Հնչակեան կամ Դաշնակցական անուանելով ինկած են անոնց լարած դարանին մէջ և եղած են անոնց շահատակութիւններուն գործիքներ։ Այսօր՝ բերկրութեամբ կը յայտարարենք թէ, տաճկահայ եղբարք թէ՛ Դաշնակցական և թէ՛ Հնչակեան վերջապէս սթափելով, անհաշիւ ու անորակ զեղծմունքներէն, ամենամեծ մասամբ քաշուած են այդ անանուն և անգոյն Պիւրօ ու Կեդրոնի լարախաղաց վարիչներէն և յարած են դէպի փրկարար միութիւն, բացի կարգ մը պատառաբոյծ պնակալէզներէ, որոնք հայրենիքին քառասուն կամ յիսուն գօմիսիօնով միջնորդ ըլլալ կ'ուզեն տակաւին վարպետ խաչագողներու և երիցս թշուառացեալ տաճկահայ խեղճ ժողովուրդի մէջ, և ահա ատոր համար է «Կատակ և Տաւրոս» չը նայելով իր նիւթական անձուկ վիճակին յանդգնութիւն գործեց այդ կեղծ դիմակները վար առնել, անխնայ խարազանելով ամենքն ալ ազատելու համար գէթ ասկէց վերջ, միամիտ ժողովուրդի կեանքն ալ, դրամն ալ։

«Տաւրոս» իր սահմանած դերը կծու կամ չը կծու պիտի շարունակէ որքան ուժ և ձայն ունի, մինչեւ որ բուն ժողովուրդէն ծագած ու ծնած հայկական միութեան մարմին մը կազմակերպուի և ազգասպան խայտառակութեանց վերջը դայ. ուրեմն հայ ժողովուրդին կը մնայ ժամանակ առաջ զգալ իր սրբազան պարտականութիւնը և կատարել զայն ի սէր ազգի ու Հայրենիքի։

Արդէն տեղ տեղ սկսուած է տեղական միութիւններ կազմուիլ, հաւաքուած դրամներն իրենց մօտ, իրենց աչքին առջև վստահելի ձեռքի մը մէջ պահուիլ մինչեւ ըլլայ ընդհանուր կազմակերպութիւն եւ կարեւորութիւն չը տրուիլ դէս ու դէնական ինքնակոչ, անտուն ու անանուն դրամաշորթներուն։

Այս անգամ այսքան բացատրութեամբ կարող եղանք կարծեմ հասկցնել մեր տաճկահայ Հնչակեան եւ չը Հնչակեան, Դաշնակցական կամ չը Դաշնակցական պատուական եղբարց, որ մենք իրենց հետ գործ չունինք, այլ Պիւրօյականներու, կեդրոնականներու եւ անոնց քմահիմներու հետ, որոնք՝ մեզի ասվիճակին հասուցին, եւ դեռ կ'աշխատին քար գայթակղութեան ճնալ ու տպրիլ մեր մէջ։

ԱԶԳԱՅԻՆ

Թուրք կառավարութիւնը Ռուսիոյ դեսպանին խիստ դիմումներուն վրայ նորէն իր աղուէսական քաղաքականութիւնը ձեռք առած է դիւրախաբ Հայերը գոհացնելու ձեւեր ցոյց տալով, ինչպէս 1878 ին ըրաւ Այ Սթէֆանոյի 16 րդ. յօդուածը Պէռլինի 61 րդ. անդամալոյծ յօդուածին վերածել տալու համար յատուկ պաշտօնեաներ ղրկած է Հայկական գաւառները շնորհակալութեան հանրագրութիւններ մուրալու։ Մենք տարակոյս չունինք որ պիտի գտնէ նա իր փնտռած ախմախները, սակայն առով Հայկական դատը չի պիտի կրնայ մեռցնել, և ոչ ալ Ռուսիոյ պնդումները մեղմացնել։ Արդարեւ Հայկական դատը հիւանդ է այսօր, սակայն պիտի առողջանայ մի օր և Թուրքը վերջապէս պիտի ստիպուի տալու այն յարգանքները Հայ իշխանի մը ինչ որ այսօր կուտայ Պուլկար և Գարասաղի բրէնններուն։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Անցեալ անգամ «Տաւրոս»ի 9 րդ թերթով մենք ցոյց տուինք հայ հասարակութեան Պարսկաստանի Դաշնակցութեան Կոմիտէի գործած եղբայրասպանութիւնները. այս անգամ մեր նիւթը կը լինի Խանասորի արշաւանքի անտակտ նախապատրաստութեանց մասին 96 թուականից։ Ուրեմն երկու տարի առաջ դեռ 96 թուին խուլ կերպով խօսում էին ղէս ղէն կովկասցի գործիչները (թող ներուի ինձ, Դաշնակցութիւն ասելով ես կովկասցիների միութիւն կը հասկնամ, թէ ինչո՞ւ, այդ մասին յաջորդաբար կը պարզեմ «Տաւրոսի էջերով) թէ «Հայդուկներ պէտք է հաւաքել, խմբեր պէտք է կազմել եւ արշաւել Տաճկա-Հայաստանի մի կէտի վրայ». ո՞ր տեղից էր փչում այդ հովը, Հիւսիսի սառն քամին է՞ր յղանալ տուել այդ միտքը նրանց թէ Արեւմտեան ակնկալութիւնները, այդքանը յայտնի չէր եւ յետոյ ինչ միտք, ինչ նպատակ եւ օգուտ պիտի ունենար այդ արշաւանքը, այդ էլ յայտնի չէր, եւ թէ ո՞վ պիտի մտածէր օգտի կամ նպատակի մասին, բաւական էր Բիւրօն յղացել էր այդ միտքը . . . ։ Եւ այդ արշաւանքը պիտի լինէր այն ժամանակը երբ Տրապիզոնի, Վանի, Պիթլիսի, Ամասիայի, Արաբկիրի վերջապէս ամէն անկիւնում եղած հայերը կոտորւում էին անխնայ թշնամու, բարբարոս Թուրքերու սրի տակ։ Ահա հէնց այդպէս մի ժամանակ էին ընտրել մեր կովկասցիները օգնելու գործնականապէս Տաճկահայաստանի իրենց թշուառ եղբայրներին. մեղադրելի էլ չեն, ուրիշ ի՞նչ միջոց կար Հայ նահատակների, որբերի, գաղթականների թիւը այսչափ չատցնելու, եթէ ոչ այդ տեսակ մասնակի անհիմն ցոյցեր, Տրապիզոնում Բահրի մը վիրաւորելով, Կ. Պոլսում Բանգա մը գրաւելով, Պարսկական սահմանադլխում արշաւանք մը անելով եւն։

Եթէ ոեւիցէ մէկը հարցնէ մեզ, թէ «աշխարհի վրայ ո՞վքեր են այն մարդիկ որոնք գործում են եւ չգիտեն ի՞նչ են անում, գնում են եւ չգիտեն ո՛ւր, կանգնում են եւ չգիտեն ո՛ր տեղ են»։ Այդ հարցին մենք խորին համոզմունքով կը պատասխանենք այսպէս թէ «այդ մարդիկը՝ Հայկական Ս. դատը, այս խառնափնթոր, լքուած վիճակին հասցրնող, ինքնակոչ եւ բախտախնդիր յեղափոխական գործիչներն են, — ի բաց առեալ մաքուր եւ անկեղծ յեղափոխական դասակարգը» — այդ ինքնակոչները, դառն եւ ցաւալի իրողութիւն, իսկապէս ցոյց տուին թէ՛ Հայ ժողովրդին եւ թէ՛ Եւրոպական տիրապետիչներին թէ իրենք տանջուած, չարչարուած ժողովուրդ մը պաշտելի յեղափոխութեան միջոցով ազատելու կարողութիւնն չունենալէ զատ, խոզերի մի երամակ արածացնելու կարողութիւնն իսկ չունին, ահաւասիկ Հայ ժողովուրդ, Յեղափոխականների այդ դասակարգն է որ սպարէզ է դուրս գալիս, զեկավարելու ազգ մը, Հայրենիք մը դէպի փրկութի՛ւն, դէպի բարօր կեանքը. . . ։ Ուրեմն, Հա՛յ ախպէրներ, ժամանակ է արդէն ընտրութիւն անէք, ճանաչէք անձնուէր եւ լուրջ գործիչներին եւ ձեռք տաք նորան, ջոկեցէք անկեղծը կեղծէն, բարոյականը անբարոյականէն եւ այդ մաքուր դասակարգին տուէք ձեր աջը «Եղբա՛յր եմք մեք» գոչելով. այդ ժամանակ միայն կ'անհետանան եւ կը չքանան ասպարէզից կեղծ եւ դիմակաւոր գործիչները։

Յեղափոխականը յեղափոխութեան պէտք է ծառայէ եւ գործիք լինի նորա թրթռուն լարերուն եւ ոչ թէ յեղափոխութիւնը ծառայէ յեղափոխականին։

Անցնինք մեր խնդրին։ Դաշնակցութիւնը 96 թուին արշաւանք մը անելու նպատակով հաւաքեց 250 ի մօտ հայդուկներ, մեծամասնութիւնը Տաճկահայաստանցիներ, հայդուկների հետ եւ միասին հազարաւոր ռուբլիներ էին որ թափուում էին Կովկասից, շողշողուն ոսկիներ Տաճկա-Հայաստանի զանազան կարող անկիւններից, ֆրանքներ, Նաբոլէօն ոսկիներ Եւրոպայի հայ եղբայրներից, Դաշնակցութեան Պարսկաստանի Կոմիտէն կամ Բիւրն իսկական գործի սկսելուց առաջ, գրպանի հետ կոկորդն էլ բաց արած, տեղաւորում էր այդ դրամները, նախ գրպանում եւ ապա ստամոքսում . . . . . ։

Պարսկաստանի միամիտ Հայերը արտասովոր ուրախութեամբ սկսեցին հիւրասիրել այդ ինքնակոչ հայրենասէրներին, ամէն մի տունը ընդունեց իր տան մէջ մէկից մինչեւ երեք հայդուկներ, իբրեւ անձնուէր մարդիկների, կերակրում էին նրանց իրենց ունեցած հացով ու գինիով վերջապէս մառանում լցուած Աստուծոյ բարիք ուտելեղէններով. իսկ թէ ի՞նչպէս եւ ինչո՞վ փոխարինեցին հիւրասիրողները, ընթերցողը թող մի քիչ համբերութիւն ունենայ մինչեւ կարդին ես կը գրեմ այդ։ Իսկ բայի գրանցից Կոմիտէի ամէն մի անդամները մէկ մէկ անգլիական Լօրտեր էին դարձել, իրենց փառաւոր եւ Լօրդական կեանքով . . . . . փողը, ծախսը հաշիւ ու համար չունէր։

Այդ բոլոր պատրաստութիւնները ինչո՞ւ համար էին, իրենց ասելով արշաւանքի, հապա ինչո՞ւ չեղաւ արշաւանքը 96 թուին, Հայ ժողովրդեան արամադրութիւնը լաւ էր դէպի իրենց, չէր խնայում իր վերջին կոպէկը. հաւատում էր ժողովուրդը, բայց ժողովրդի այդ հաւատքը նրանք գործածեցին չարաչար կերպով, օգտուելով հանգամանքից չահագործեցին ամենաանխիղճ կերպով։ 96 թուի ամբողջ 250 հոգի ձրիակերներից միայն 25 հոգի երկու փոքրիկ խմբերի բաժանուելով Վան գընացին, իսկ թէ ի՞նչ օգուտ տուին, ընթերցողը թող կարդայ այդ «Տաւրոս»ի նախորդ 9 րդ. թուի մէջ։ Կարո՞ղ էք երեւակայել ընթերցողներ, որ Վանի կոտորածի ճիշդ բոպէին այդչափ հայդուկները զէնքը ձեռքերնին զուարճալից կեանք էին անցկացնում Սալմաստում . . . . . ։ Բայց ի հարկէ այդ դէպքում մեղաւոր չէր պարզամիտ հայդուկը, այլ մեղաւոր էր նրան վարող Կոմիտէն։ Եթէ անձնազոհ գործիչներ էին ինչո՞ւ չհասան Վան օր առաջ իրենց հայ եղբայրների հետ միասին զոհուելու։ Բայց ի՞նչ եմ ասում, չէ որ անմիջական մահ կար մէջտեղը եւ նրանց մեռնելով հայ ազգը պիտի զրկուէր իր թանկագին հերոսներից, ո՞վքեր պիտի զեկավարէին զէպի ապանդնոցը հայ ժողովրդին, նրանց մեռնելուց յետոյ, ուրեմն մենք դալիս ենք այն անհերքելի համոզմանը, որ մեր հերոսներին ետ կասեցնողը՝ Վանին օր առաջ օգնութեան հասնելու համար՝ միայն եւ միայն իրենց կաշիների վրտանգն էր, մահն էր . . . . . ա՛խ, սոսկալի համոզում, թող երկրում ջարդ ու փչուր լինի ժողովուրդը, գոնէ նա քաջութիւն ունի համբերութեամբ իր մերկ պարանոցը Մահմետական սրի տակ երկնցնելու . . . ։

Փա՛ռք ձեզ, քաջե՛ր. Դաշնակցութեան ներկայացուցիչներից մէկը Վանի կոտորածի ժամանակ բլաւել էր աջ ու ձախ, թէ «Թո՛ղ կոտորուի հին սերունդը, մեզ նոր սերունդն է հարկաւոր . . .», էլ Թողնում եմ ձեր դատողութեան, ընթերցողնե՛ր։

Անցա՛ւ 96 ը, չկատարուեցաւ իրենց ծրագրած արշաւանքը, ապրիլից մինչեւ հոկտեմբերը 250 հոգի կերան ու խմեցին իրենց աղա Բիւրօյականների հետ, հոկտեմբերին սկսեցին ցրուել եւ ամէն մէկը իր տեղը գնալ, իւրաքանչիւր ձրիակերը օրհնելով, երկար կեանք մաղթելով Բիւրօյի անդամներին, «Աստուած չատ հաց տայ» ասելով ամէն մէկը իր գործին գնաց . . . ։

Անցա՛ւ 96 ը, գլորելով ձրիակերների բանակի եւ հրամանատարների անյատակ կոկորդներում եւ գրպաններում 40,000 ռուբլու չափ կլորիկ գումար մը, հոգին դուրս գայ ազգին, մի՛թէ նա փող պիտի խնայէ իր անձնազոհ հերոսներին ° ° ° . . . կը տայ քանի որ կը հաւատայ, եթէ չը տայ էլ չարաչար կ'սպանուի Բիւրօյի կողմից, այսինքն Տէոորի կ'ենթարկուի . . . . . ։

(Շարունակելի)

ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

Կարգ մը դէպքերու յաջորդաբար երեւումովը՝ սա համոզման մէջ հաստատուած ենք թէ, մեր մէջ շատ հեշտ և շատ սովորական է դարձեր, առանց դիւրքը, արժանիքը, անցեալ կեանքը նկատի ունենալու, անձնական գաղուռ էնթրիքներու համար մէկու մը անձնասիրութիւնը մրոտել, ամբաստանութեանց ամենէն սոսկալին եղող դասման անունը հասարակ մեկդիրի մը պէս փակցնելով ամէն մարդու, որը ապացուցանող փաստերը կամ *ինչ ինչ պատճառներով չեն կրնար հրատարակուիլ և կամ անձնական գաղտնիքներ ըլլալով ապագային վերապահուած կ'ըլլան։* Ահաւասիկ երկու նշանաւոր բանաձեւեր, զորս ամէն Դաշնակցական անհատ մեծ խնամքով ուսած է իր վարպետներէն և զորս կը փութայ տանց թերեւս ինք ալ հասկցած ըլլալու, թուքակի մը պէս անթերի կրկնել ամէն անգամ որ նուրբ եւ կարեւոր խնդրի մը վրայ բացատրութիւն կը պահանջուի իրմէն։

Արարատ աշխարհքին յայտնի է որ, Դաշնակցութիւնը, իբրեւ թուրքի մատնիչ, իբրեւ ազգաշնաս սորաքարշ էակ մը, իր հրապարակներէն մէկուն միջոցով մէկ քանի տարի առաջ տեսնելի ենթարկել տուաւ «Հայրենիք» թերթի խմբագիրը եւ հիմա՝ Արփիարեան կուսակցութեան զեկավար Պ. Արփիարեանը, որուն մատնիչութիւնը հաստատող փաստերը։ Մինչեւ հիմա՝ դժբաղդաբար չերեւացին «Դրօշակ»ի մէջ, ինչ որ անհրաժեշտ էր եւ կարեւոր. եւ նոյն իսկ հիմա՝ հակառակ իր հրաւէրներուն եւ կարգ մը արփիարականներու պահանջումներուն ու թախանձանքին՝ Դաշնակցութիւնը չուզեց իր լռութիւնը խզել, եւ եթէ երբէք ունէր մէջտեղ դնել իր ապացոյցները, առարկելով թէ՝ *ատոնք ապագային վերապահուած են* եւ ատոնց երեւումը կրնայ կուսակցականներուն մոլեռանդութիւնը գրգռել և պատճառ դառնալ կարգ մը անպատեհութեանց։ Փաստերը ապագային վերապահուած։ Օ՜հ, ինչ աղէտալի տրամաբանութիւն . . . . ։ Ժամանակը կը սահի, ապագան կը մնայ միշտ ապագայ, փաստերը այդ ապագային վերապահուած և հետեւաբար յաւիտենականապէս երեւան չի գալու դատապարտուած։

Բայց դուք, Պարոն Դաշնակցականներ, եթէ ժողովրդին օգտին ու բարեկեցութեանը համար աշխատողներ էք, մէկդի ձգելով ամէն մնասի ու փուճ նկատում, ամէն ապուշ պատճառաբանութիւն, ազգը՝ այս կարգի վնասակար տարրէ մը ազատելու համար, պարտաւորուած էք աւելի քան երբէք հրապարակ բերել ձեր տօքիւմէնտները. իսկ եթէ յամառիք լուռ մնալու, որուն տարակոյս չունինք, մեր ան համոզումը թէ — Արփիարեան Դաշնակցական ջոջի մը քմահաճոյքին զոհ գացած է — աւելի պիտի ամրապնդուի, և ան ատեն Դաշնակցութեան պատմութեան մշուշոտ էջերէն մէկն ալ պիտի կազմէ այն չարաշուք արարքը, որ տարիներու ընթացքին մէջ չը պիտի սրբուի։

Մ.

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Բ.

Լատինացիներ ասում էին մեռնողի մասին. «Կամ պէտք է լաւ ասել կամ լռել»։ Ես այդպէս էլ արի, նուիրելով ամբողջապէս Վարք-Պատրիկովի յիշատակին։ Բայց նոյն Լատինացիներ ասում են. «Պղատոն թանդ է, սակայն ճշմարտութիւնն աւելի թանգագին է»։ Ուրեմն, յանուն այդ ճշմարտութեան, թո՛ղ ներէ ինձ հերոսի տուերը, եթէ ես համարձակւում եմ նրա յիշատակարանի մի կտոր քննադատութեան ենթարկել։

Կան շատ բառեր, որոնք չնայելով իրենց իմաստի ամբողջ վեհութեան, լուրջ մարդիկ քաշւում են գործածելուց։ Դրա պատճառն այն է, որ այդպիսի բառեր ընկնելով հանգամանքների համեմատ հրապարակի վերայ, ինչպէս մի լաթ մաշւում, կեղտոտւում եւ բոլորովին կորցնում է իւր նախկին գոյն ու տեսք։ Այդ շատ հասկնալի է հրապարակաւ, ով ասես ատով չի կոխկռտում, ով ասես չի շոշափում եւ ով ասես այդ լաթով իւր կեղտոտութիւներ եթէ ոչ սրբում, գոնեա ծածկում է . . . ։

Այսպիսի մի լաթ բաւ էր մեզանում մի ժամանակ ազգասէր բառ։ Զը նայելով նրա իմաստի վսեմութեան չնորհիւ գլխաւորապէս Կ. Պոլսի հոսհոսներին տեղի եւ աւելի շատ անգամ անտեղի գործածութիւն դարձաւ մի մաշած լաթ եւ լուրջ մարդ խոյս էր տալիս գործածելու, աշխատելով նոյն իմաստով մի ուրիշ բառ գտնել։ Այժմ տեսնում էք որ այդ բառը պատմական դարձաւ եւ նրան կարելի է գտնել հնագիտական գրքերում։

Այն երջանիկ օրեր, երբ Ռուսահայ մի քանի «մեծ հերոսներ» իրենց ձեռք վերցրին, հայ ժողովրդի ճակատագիրը հրապարակ ընկաւ յեղափոխութիւն բառ էր այդ։ Այս վերջին մի քանի տարիներում ով ասես այդ խեղճ բառը չը գործածեց, ինչեր ասես այդ բառով չը

ծածկուեց — սկսան զանազան անպէտք կեանքի կուի մէջ իրենց աշխատանքով մի կտոր հաց չը ճարող լօթիների սատմոքսից մինչեւ չորս հարիւր հազար հայերի թափուում արեան գետեր . . . . . ուշադրութիւն դարձրէք մեր տեղ կատարուում է ամենասարսափելի չարագործութիւն՝ ընկերն սպանում է իւր ընկերոջ — ինչո՞ւ յեղափոխութիւն է մեղաւոր. մի ուրիշ տեղ կնոջ հետ վարուում են ամենալիրը կերպով, նա իւր ամօթ ծածկելու համար ինքնիրեն ըսպանում է — յեղափոխութիւն է մեղաւոր . . . . Մի այլ տեղ միքանի մեծ աղաներ նստած ուտում, խմում . . . . դրանց համար ոսկիներ են հարկաւոր եւ ահա միքանի միամիտներ գնում են սպանում, կրակի եւ սրի տալիս ամբողջ նահանգի հայերին . . . . իսկ այս կողմեր մեծ աղաներ կանչում են յեղափոխութիւն, յեղափոխութիւն այսինքն ոսկի, ոսկի։

Անհնարին է մի առ մի թուել թէ ինչեր կատարուեցին այդ վեհ բառի տակ։ Եթէ ես այժմ ատիպուած եմ այդ բառ գործածել նախ նրա համար որ ուրիշը գտնել դժուար է, երկրորդ ախր եթէ այսպէս շարունակի մի գեղեցիկ օր չնորհիւ զանազան Վարք-Պատրիկովների եւ ընկերների Հայոց լեզուի բոլոր լաւ միտք ունեցող բառեր «փոշոտիկ» կը դառնան . . . ։

Դառնանք Վարք-Պատրիկովի յիշատակարանի մի կտորին (դժբաղդաբար ամբողջը ես առ այժմ չունիմ-ինք հաւնել է միայն մի կտոր այն էլ տրտագրած)։ «Հանգուցեալն ասում է» Գուլաքսըզեան վերջին ժամանակներ աշխատակցում էր արտասահմանի մի թերթի - որը կատաղաբար յարձակւում է ռուսահայ յեղափոխականների վրայ եւ առհասարակ յեղափոխութեան վերայ։ Երեւի նրա համար որ ռուսահայեր նոցա փող չը տուին . . . . ։ Փող ուին չը տուին, առայժմ մի կողմ թողնենք, որովհետեւ մեզ չը տուին մենք թշնամի դարձանք—Ձեզ տուին դուք յեղափոխական դարձաք, այնպէս չէ՞, մեծ նիկոլներ, ջալատներ եւ այլներ . . . . ։ Վարք-Պատրիկովին չեմ հարցնում, որովհետեւ նա «հանգուցեալ է» ուրեմն եւ պատասխանել չէ կարող . . . ։

Մի փոքր դպչինք «հանգուցեալի» սատծը։ Միշտ աւելի օգտակար է մրտքերի նշանակութիւններ չը խառնել։ Բաժանենք միմեանցից ռուսահայ յեղափոխականներ առհասարակ յեղափոխութիւնից։ Երկու մտքերի մէջ ահագին զանազանութիւն կայ . . . . Ամենքին յայտնի է այն կատաղի կռիւ, որը մըղում էին միմեանց դէմ Հնչակեաններ եւ Դաշնակցականներ, երկուսն էլ իրենց յեղափոխականներ էին անուանում, եւ երկուսի վարիչներն էլ ռուսահայերն էին, նոյն Վարք-Պատրիկով երբ Հնչակեան էր հայհոյում էր Դաշնակցականներին, իսկ այժմ եթէ կենդանի լինէր կը հայհոյէր Հնչակեաններին . . . իսկ մենք երբ երկու կուսակցութիւնների բռնած ընթացքը վնասակար էինք համարում, այդ դեռ չի նշանակում, որ մենք հայ ժողովրդի յեղափոխութեան դէմ էինք կռուում առհասարակ։ Ուրեմն ռուսահայ յեղափոխականներ եւ յեղափոխութիւն նոյն չեն։ Ուզենք Վարք-Պատրիկովի մի փոքրիկ ժամանակագրական սխալ։ Այս տողեր գրողը ոչ միայն վերջին ժամանակներս հակառակ է եղել ռուսահայ յեղափոխականների գործունէութեան այլ ճիշդ այն օրեր երբ հանգուցեալ եւ իրեն նմաններ մի օր քնից զարթնուն եւ ինքն իրենց յեղափոխական գտան եւ այդ օրերն էր որ Գուլաքսըզեանի մասին ասում էին տանեակ հազարներ է ժողում։ Տեսէ՛ք Պ. Փորթուգալեանի «Արմենիա»ն։ Այո՛, ես սկզբից հակառակ էի նրանց գործունէութեան ձեւին եւ դժուար չէր դեռ 90 թուականներին նախատեսել այն՝ ինչ որ այժմ կատարուեց։

Ես ասում եմ, եթէ Տաճկա-Հայաստան մի ծայրից միւսը արեան գետեր վազեցին, եթէ երկիրը աւերակ դարձաւ եւ մեր գործի ապագան վտանգուեց, եթէ այսօր Սալմաստ աւերուում է, եթէ Կովկաս այժմ այս վիճակին է հասել, դրանց պատճառը ռուսահայ յեղափոխականների բռնած ճանապարհն էր։

Միւս անգամ կ'աշխատիմ որքան հնարամանքներ կը ներեն ապացուցանել իմ ասածը։ Այժմ առանց այն էլ երկարեց նամակս։

Լ Ի Օ

ՇԱՐԺՈՒՄ

ԵՒ ԻՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

«Այս օրուընէ կ'սկսինք հրատարակել «Շարժում» կիսաշաբաթաթերթը։ Այս ձեռնարկ նպատակ ունի օգտակար ըլլալ արտասահմանի հայութեան եւ մասնաւորապէս Պուլկարիոյ եւ Ռումանիոյ հայ գաղութներուն, որոնց համար բազմակողմանի ու անաչառ թերթի մը պէտքն այնքան զգալի եղած է։ Թրքական թոյլ ու քծնող բարքերու հինգդարեայ լուծը մեր տոհմային ինքնուրոյն նկարագրին կարեւոր հարուած մը տրուած ըլլալով. հարկ է որ այլ եւս սթափինք եւ դառնանք ինքնաճանաչութեան փրկաւէտ գաղափարին, որուն անկարելի է հանիլ առանց խիստ, անշահախնդիր ու քննադատող մտքի։ Եւ ճիշդ բարեշրջումի ու վերակենդանութեան կ'ուզէ զարկ մը տալ «Շարժում» . . . ։

«Շարժում» անխնայ պիտի հարուածէ բոլոր այն կեղծիքները, նենգութիւնները, կործանարար մնափառութիւնները եւ մեր ընկերային կեանքին բարոյական ախտերը, որոնք այսօր մեր խեղճ ազգին ամենէն բարդ խաւերուն մէջ բոյն դրած՝ միքրոպային անյագութեամբ կը կրծեն ու կը քանդեն»։

Ահա՛, այս և այսպիսի սկզբնական յայտարարութեամբ պճնազարդուած՝ լրագրական հրապարակը նետուեցաւ «Շարժում» բարեշրջումի ու վերածնութեան այդ տիպար թերթը, իր մէկ աշխատակցին՝ Վարդօի միջոցաւ մատանիշ ընելով նաեւ արտասահմանի հայ լրագրաց մեծամասնութեան ապականեալ վիճակն ու անկարողութիւնը։

«Շարժում» իր այս յայտարարութեամբ կ'ստանձնէր ամենամեծ և ծանրակշիռ պարտականութիւն մը, հանրութեան օգտակար լինելու կոչում ունեցող թերթի մը ամէն առաւելութիւններով օժտուած կարծելով ինքզինքը. «Շարժում» կ'ուզէր արտասահմանի գաղութներուն՝ որով և հայութեան մէկ մասին՝ զարգացման սատար լինել և ոգի ի բուին ջանագիր ըլլալ բարձրացնելու նոցա մտաւորական մակարդակը և զտելու ու ազնուացնելու անոր բարոյականը ի բաց վտարելով այն օտար ու եկամուտ մոլութիւններն ու բարքերն որոնցմով ապականուած է մեր տոհմային ինքնատիպ նկարագիրը։ «Շարժում»՝ իբրեւ ապագայի պատմական հսկայ և վիթխարի կոթող մը, կուզէր հայութեան բարեշրջման դարագլխի օրականն ըլլալ. արդարեւ պաշտելի՛ ձեռնարկ։

Յիրաւի, «Շարժում»ի սկզբնական պոռոտախօս յայտարարութիւնը ոմանց այն համոզումը գոյացնել տուած էր թէ՝ իրաւամբ իր առաջադրած ուղղութեամբ «Շարժում» պիտի կարողանայ պուլկարահայ և արտասահմանեան թերթերու մէջ գերակշիռ դիրք մը ունենալ, սակայն այդ համոզում՝ բոլորովին հեռի էր հաստատուն լինելէ, որովհետեւ տիկա յառաջ եկած էր պարզապէս ժողովրդեան փափաքանաց համապատասխանող յայտարարութեան մը ընթերցումէն։ Իրական փաստեր չկային երաշխաւորող թէ՝ «Շարժում» առակ է և պիտի կարողանայ արդեամբ իր նախագծած ուղիէն ընթանալու, և մերթ ընդ մերթ «Իրաւունք»ի մէջ երեւցած «Շարժում»ի խմբագրաց և աշխատակիցներու մտադրութիւններն անբաւական էին առ այս, և նոյն իսկ այդ աշխատակցաց միքանիներուն անկեղծութեան մասին կասկածներ կային։

Յաջողեցա՞ «Շարժում» իր ձեռնարկին մէջ և ի՞նչ բարերար ազդեցութիւն ունեցաւ իր եռամեայ ընթացքին մէջ. — պատասխանը ժխտական է և բացասական։

Մէկդի թողլով «Շարժում»է պահանջուելիք այն պայմանները որոնց գոյութիւնն հաստատող ոեւէ ապացոյց չտեսնուեցաւ ցարդ, գէթ կը պահանջուէր որ «Շարժում»ի խմբագրութիւնը անկողմնակալութեան և առողջ քննադատութեան ոգւով մղուած՝ ամէն տեսակ խնդրոյ մէջ ըլլալ, խորազնին և ճշմարիտ լինէր. «Շարժում»ի խմբագրութիւնն նոյն իսկ այս տարրական պայմանն ըմբռնելու անընդունակ է։

Զրպարտութիւն չէ՛ որ կ'ընենք, ո՛չ ալ ծիծաղելի ամբաստանութիւն մը. իրողութիւնն է որ իր բոլոր մերկութեամբ կուգայ արդարացնել մեր ըսածները։ Ընթերցողաց արդէն ծանօթ է, որ վառնայի «Սիլա» պուլկարական շաբաթաթերթը ֆրանս. և գերմ. թարգմանուած երկու լրտեսական նամակներ հրատարակած էր, որոց միոյն մէջ ըսուած էր, որ «Այն հայը որ կարող է հայկական թերթերը լուսցընել կը կոչուի Տիգրան ճգնաւորեան։ «Սիլա» հրատարակելով այդ երկու նամակները, իր կողմանէ ոեւէ կարծիք յայտնած չէր, զի գիտեր անշուշտ թէ՝ ատոնք հաստատուն և իրական փաստեր չեն կատարուած կամ կատարուելիք իրողութեան մը մերկացմանն ու ըստուգութեանը։

«Սիլա» նոյն իսկ թիւրիմացութեան տեղի չտալու համար, իր հրատարակած երկու նամակներէն միոյն մէջ յիշուած անձին՝ այն է Տիրայր Ճգնաւորեանի մասին «մեզի ամենաբարի հայու արձագանքներ արուեցան, զոր կը փութանք հաճութեամբ արձանագրել» գրելու համեստութիւնն իսկ ունեցաւ։

Սակայն զարմանալի է որ այդ երկու նամակներն ատիթ տուած էին «Շարժում»ի՝ յարձակողական գրչաւ յանիրաւի դատափետելու «Տաւրոս»ի խմբագիր Տիար Յ. Զաքրեան և աշխատակիցն Տիար Տիգրան Ճգնաւորեանը։

Մեր յաջողդ յօդուածով մենք պիտի պարզենք այդ կէտը, ցոյց տալով բարի-ծաղիկ «Շարժում»ի ամբաստանութիւնները «Տաւրոս»ի և իր աշխատակցին դէմ։

ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

(Շարունակելի)

Երեւակայական յաղթութեան հերոսը (Տօն Քիշոտ)

ՏՕՆ ՔԻՇՕԹ ԵՒ ԻՐ ԶԻՆԱԿԻՐ ՍԱՆՇՕ ԲԱՆՇԱ

Ա. ն միջոցին Տօն Քիշօթ կը յորդորէր իր դրացիներէն մէկը, աղքատ, ակարամիտ հողագործ մը, որ, իբրեւ զինակիր, իրեն հետեւիր։ Այն շատ մը խոստումներուն մէջ, զորս մեր հերոսը տուաւ միամիտ մարդուն, միշտ կը կրկնէր թէ, թափառիկ զինակիրի գեղեցիկ պաշտօնին մէջ չի կար բան մը այնչափ գիւրին որչափ ակնթարթի մը մէջ կղզիի մը կառավարութիւնը ձեռք ձգելը. դիւրահաւան հողագործը, որ Սանչօ Բանչա կը կոչուէր, այս յոյսէն հրապուրուած՝ որոշեց լքել թէ՝ տղաքը և թէ՝ կինը այն կառավարութեան ետեւէն վազելու համար։ Տօն Քիշօթ, զինակիրի մասին ապահովուած՝ քիչ մը դրամ հաւաքելու ետեւէ եղաւ, կատր մը հող ծախեց, ուրիշ կատր մը գրաւի դրաւ. վար գնով ծախեց ամէն բան և յաջողեցաւ բաւական դրամ գոյացնել։ Իր մէկ բարեկամէն փոխառաւ իրենինէն լաւագոյն կըր վահան մը, վերստին նորոգեց իր սաղաւարտը, շապիկ ճարեց՝ պանդոկապետին խորհուրդին հետեւելով, և Սանչօին հետ համաձայնեցաւ ան օրուան ու ժամուան մասին ուր պիտի մեկնէին։ Մանաւանդ յանձնարարեց Սանչօին որ, մանտիկ (հէյպէ) մը հետ առնէ։ Սանչօ խոստացաւ որ չի մոռնար և աւելցուց թէ, հետիոտն ճամբորդելու շատ վարժ չըլլալով՝ կը փափաքէր իր էշը հետ առնել, որ պատուական կենդանի մըն էր։ Էշ բառը քիչ մը դիւր չեկաւ Տօն Քիշօթին, որովհետեւ չէր յիշեր ոչ մէկ նշանաւոր զինակիր որ այս կերպով հետեւած ըլլար իր տիրոջը։ Բայց խորհելով թէ՝ առաջին պարտուած ասպետին ձին արդէն Սանչոյին պիտի տար, ոեւէ անպատեհութիւն չը տեսաւ անոր էշով հետեւելուն մէջ։

Ամեն կարգադրութիւն ընելէ ետք, գիշերին մէկը, Տօն Քիշօթ

և իր զինակիրը, առանց մէկուն մնաս բարով ըսելու, ճամբայ ելան, և այնչափ քալեցին որ, արշալուսին, ալ չը վախցան թէ մէկը կրնար իրենց ետեւէն հասնիլ։ Միամիտ Սանչօն, Էշին վրայ, բակեղէթ կամ մանտիկին և խոշոր կօշին* (gourde) մէջտեղը նստած, պարիարքի մը կը նմանէր, և անհամբեր տեսնել կ'ուզէր այն կղզին որուն կառավարիչը պիտի ըլլար։ Ցօն Քիշօթ յուսալից, հպարտ դէմքով և գլուխը բարձր, վտիտ Ռօսինանդին (իր ձին՝ վրայ, կը յառաջանար Մօնթիէլի միեւնոյն դաշտը, ուր արեւին ճառագայթները, հիմա միմիայն կողմնակի հաններով իրեն, անչափ զինքը չէին նեղեր, որչափ առջի ճամբորդութեան առենը։

Սանչօ խօսիլ ուզելով՝ սկսաւ.

«Տէր իմ, ըսաւ, կը հայցեմ Ձեր թափառիկ ասպետութենէն, որ մոքէն չհանէ այն կղզին զոր ինծի խոստացաւ»։ Կրնամ Ձեզ վստահեցընել թէ կղզին, որչափ ալ մեծ ըլլայ, դէշ չը պիտի կառավարուի իմ կողմէս։ — Բարեկամ Սանչօ, պատասխանեց Ցօն Քիշօթ, ամեն ժամանակ ասպետները սովորութիւն ըրած են իրենց զինակիրներուն տալ այն կղզիները կամ այն թագաւորութիւնները, որոնց տէր կ'ընէ իրենց արժանիքը. դուն լաւ գիտես թէ ես բնաւ չեմ ուզեր այդ աղնիւ սովորութեան հակառակ գործել։ Անկէ աւելին ալ պիտի ընեմ. մեծ մասը այն ասպետներուն որոնց վրայ կը խօսիմ քեզի, կ'սպասէին որ իրենց զինակիրները ծերանան՝ վարձատրելու համար անոնց ծառայութիւնները, կամ կոմսութիւն մը տալով և կամ մարքիզութիւն որ յաճախ խեղճ գաւառ մըն էր միայն. իսկ ես, եթէ Աստուած մեզ ողջ պահէ, վեց օր անգամ չանցած՝ պիտի նուաճեմ անանկ մեծ կայսրութիւն մը, որմէ կախում ունեցող թագաւորութիւններէն մէկը քեզի պիտի տամ։ Մի՛ կարծեր թէ, այս գործը դժուար կամ տարօրինակ է. մեր պաշտօնին մէջ ատոր չափ պարզ և հասարակ բան չի կայ։

—Եթէ այդպէս է, յարեց Սանչօն, անգամ մը որ ես թագաւոր ըլլամ, կինս ալ թագուհի՝ պիտի ըլլայ պիտի ըլլայ և իմ զաւակ ըսահակներս ալ՝ գահաժառանգ։

Տարակոյս չի կայ։ — Ես կը տարակուսիմ չիտակը, որովհետեւ կինս կը ճանչնամ, և կ'ապահովցնեմ ձեզ որ՝ եթէ նոյն իսկ երկնքէն պսակներ տեղան անոնցմէ ոչ մէկը պիտի վայլէ իր գլխուն։ Ես Ձեզի առաջուց կ'իմացնեմ որ, անիկա երկու մարավէտիի (սպանիական դրամ) իսկ արժէք չունի, ո՛ւր մընաց որ թագուհի ըլլայ. եթէ կոմսուհի ըլլայ ըսելիք չունիմ, բայց նորէն աղէկ չըլլար։

—Հոգ մի՛ ըներ բարեկամս, Աստուած գիտէ ինչ որ տալ պէտք է անոր։ Գալով քեզի, կղզիով մը գոհանալու չափ համեստ մի՛ ըլլար։ —Օ՜ն, թո՛ղ ձեր մեծապատուութիւնը հանգիստ ըլլայ. ես ձեր վրայ միայն վստահութիւն ունիմ։ Ձեզի պէս հզօր և բարի տէր մը գիտէ հարկաւ թէ ի՞նչ պէտք է ինծի։

Նոյն պահուն Ցօն Քիշօթ եռեսուն, քառասուն հողմաղաց նշմարեց և իր զինակիրին դառնալով, «Բարեկամ, ըսաւ, բախտը կը ժպտի կոր։ Կը տեսնես հոնա այն ահռելի հսկաները, որոնք եռասունէն աւելի են, բայց հոգ չէ, ես հիմա կը յարձակիմ Աստուծոյ և մարդոց այն գոռոզ թշնամիներուն վրայ։ Իրենց գոյքերովը մենք պիտի հարստանանք»։ — Ի՞նչ հսկայ, պատասխանեց Սանչօ։ Սա մեծ բազուկներով հսկաները, որոնք թերեւս երկու բարստախի չափ երկայնութիւն ունին։ — Բայց, պարո՛ն, զգուշացէ՛ք, անոնք հողմաղացներ են, և քեզի բազուկ երեւցողները ուրիշ բան չեն բայց եթէ իրենց թեւերը։ — Ա՜հ, խեղճ բարեկամս, կը տեսնեմ որ դուն դեռ արկածներու վարժուած չես։ Անոնք հսկաներ են, ես աղէկ գիտեմ։ Եթէ կը վախնաս, հեռացիր. Գնա՛ տեղ մը աղօթել, մինչդեռ ես պիտի ձեռնարկեմ անհաւասար և վտանգաւոր կռիւին։»

Այս խօսքերն ըսելով՝ Ցօն Քիշօթ կը քշէ ձին, առանց մտիկ ընելու խեղճ Սանչօին, որ ինքզինքը կը պատռտէր պօռալով որ անոնք հրսկաներ չէին, և առանց իր սխալը ճանչնալու՝ քանի կը մօտենայ հողմաղացներուն «Կեցէ՛ք, կ'ըսէր, կեցէ՛ք, վատ աւազակներ. միակ մէկ սպասա է որ ձեր վրայ կը յարձակի»։

Նոյն վայրկեանին քիչ մը հով ելաւ, և հողմաղացներուն թեւերը սկսան դառնալ»։ Օ՜հ, պարապ տեղը մի՛ աշխատիք, ըսաւ Ցօն Քիշօթ, եթէ հսկայ Պրիառէէն իսկ աւելի թեւեր շարժէք, նորէն պիտի պատժուիք։»

Այս ըսելով, կը դրկէ վահանը, ինքզինքը կը նուիրէ Տիւլսինէէին (իր սիրուհին) և, նիզակը ձիուն թամբին կլթնցնելով, առաջին հողմաղացին թեւին վրայ կը նետուի, որ զինքը և ձին վեր կը բարձրացնէ և իրարմէ քսան քայլ հեռու կը նետէ զանոնք։ Սանչօ օգնութեան կը փութար էշը կրցածին չափ վազցընելով։ Դժուարութեամբ կրցաւ վերցնել իր տէրը, այնքան դժնդակ եղած էր անկումը։ «Ա՜խ, Աստուած վկայ ըսաւ, ժամէ մը ի վեր կը պօռամ որ անոնք հողմաղաց են։ Մարդ իր գլխուն մէջ հողմաղաց ունենալու է, որպէսզի անմիջապէս չի տեսնէ զանոնք։ — Ասա՛, սո՛ւս պատասխանեց Ցօն Քիշօթ, պատերազմական արհեստին մէջ է որ մարդ բախտին քմահաճոյքներէն կախում կ'ունենայ, մանաւանդ երբ իր թշնամին է այն ահռելի կախարդիչ Ֆրէսթօն, որ արդէն գրադարանս գողցաւ։ Ես գիտեմ թէ ան ի՛նչ ընաւ, հսկաները հողմաղացներու փոխեց՝ անոնց յաղթելու փառքը ինձմէ կորզելու համար։ Համբերութի՛ւն, վերջապէս իմ սուրս անոր նենգութեան պիտի յաղթանակէ։ —Աստուած տա՛յ, պատասխանեց Սանչօն ոտքի կանգնեցնելով Ցօն Քիշօթը և վազեց նոյնը ընել Ռօսինանթին, որուն ուսը կէս մը խախտեր էր։

(Շարունակելի)

ԱՆԶՈՒՍՊ ՎԱՐԺՈՒՀԻՆ

Իշխանիկիմիզէ կէօրէ Ֆիլիպէտէ մուալլիմէնին պիրի «Տաբոսըմըզա հագարէթ օլմագ իւզրէ, ալէնի վէ սապի սիւպեան նէզտինտէ պիր թագըմ հագարէթամիզ ազվիաթլարտան սօնրա՝ կազէթամիզը բարա բարչա իտուպ աթմըշ տըր։

Մէրսում մուալլիմէտէն (վարժուհի) գարը վէ եախօտ դըզ, հէր գանկըսը իսէ, պէօյլէ թէրպիյէ վէ էտէպիյէթտէն տիշարը պիր ֆիիլի իշուն իզահաթ (բացատրութիւն) իսթէրիզ, չիւնքի օ՛ գաստալ սապի սիւպեան կէնճ ֆիտանլարը եիւրէքլէրինտէ ատավէթ վէ ֆէսատ թօհումը էքմէք կիւհահան զիյատէ այըպ տըր։ • • • պիզ չիմտիլիք պու գաստարճըզը քէնտիսինէ նասիհաթ տէյու իսթար իսէրիզ, պէօյլէ չիրքին հալլէ տէ պուլունարագ պիզիմ ատըմըզը թէրվիս (ալտոտել) իտէմէզ. ֆագաթ քէնտիսինէ էմնիյէթէն թէսլիմ օլընան չօլուգ չօճուգլարա եազըգ, զիրա օնլարըն թէրպիյէ վէ էտէպիյէթ էօյրէնէճէք վագթը չիմտի տիր։

Գուլաղը օլան իշիթսին։

ՄԻԻԹԷՖԷՐԻԳԱ

Վիէննատա նէշր օլընան Քօրրէսբօնտանս Բօլիթիք կազէթասընէն եազարզընա նազարէն՝ Թիւրք օրտուլարը հազիրանէն իպթիտասընտա Թէսալիատան չըգաճագլարընտան Բրէնս եօրկիոս օրայա ազիմէթինի հազիրան օն պէշինէ թէէխիր իթմիշ տիր։

* * *

Եունանիսթան գրալը եօրկիոս հազրէթլէրի՝ Ռուսիա խարիճիյէ նազարը Գօնթ Մուրավիէֆէ կրանքրուա նիշանընը թէվճիհ իթմիշ։

* * *

Բրէնս Ֆէրտինանտ՝ մէմալիքը էճնէպիյէյէ սէյահէթ իթմէզտէն Մաքէտոնիանընն Թիւրք-պուլկար հուտուտը իւզէրինտէ պիր վագտա զուհուր իթմէմէսի վէ Պուլկարիա իլէ Մակեդոնիա արասընտա միւնասիպէթ մէնն օլընմագ իւզրէ հուտուտտա պուլընան օրտուլար թագվիյէ օլընմասը իչիւն հարպիյէ նազրը Միւսիւ Իվանօֆա շէտիտ էմիրլէր վէրմիշ տիր։

Տէրխաթը օլընը քի Սուլթան տախի պիր գաչ այ մուգատտէմ Սրպիա, Գարատաղ վէ Պուլկարիա հուտուտլարընտա պուլընան օրտուլարը գավիլէշտիրիլմէսի իչին այնի պիր էմր վէրմիշ իսի։

* * *

Տէլիեանի ֆըրգասընա մէնսուպ Բալէկէսիա կազէթասը մուհարիբի Գրալ Եօրկիոսը թագպիհ իթմէք մազնունիյէթի իլէ Սթինատա թէվգիֆ օլընմըշ տըր։

* * *

Աբմանիա վէ Աւստրիա միւսթէսնա օրտուղը հալտէ՝ տիկէր պէօյիւք տէվլէթլէր թիւրք ասքէրինին կիրիատէն չըգարըլմասը վէ օթօնօմինին օրատա թէէսիս իթմէսի իչիւն լազըմ կէլէն վէսայիթ հագգընտա միւզաքէրէ իթմէքտէ տիրլէր։

* * *

Եէմէն էհալիսի արասընտա վուգու պուլան դարբըզգըգլար 13 այտան պէրու եաղմուր եաղմամասընան տօլայը զուհուրա կէլէն գահթ ու զալատան (սով) իլէրի կէլտիկի սէօյլէնմէքտէ տիր։

* * *

Մ. Սթինին Կիրիա վալիլիկինէ թայինինատէն սօնրա Մ. Նիւմա-Ֆրոզ տախի Եօրկիոսա պաշ վէքիլ թային օլընաճագ ըմըշ։

* * *

Թիւրք-Սըրպ թիճարէթ մուահէտէսինի նէթիճէլէշտիրմէք իչիւն թային օլընան գոմիսիոն իլք տէֆա օլարագ իճթիմա իթմիշ տիր։

* * *

Եիրմի պին քիլօ տիւմանսըզ պարութ իսթիհզարը իչիւն Թիւրք հիւքիւմէթի վէ ալման ֆապրիգասը արասընտա գօնթրաթ իմզալանմըշ։

* * *

Հիճազտա գրթըզգ զուհուր իթմէսի սէպէպի իլէ Սուլթան զախիրէ իչթիրասը իչիւն պիր իանէ քիւշատընա էմր վէրմիշ վէ քէնտիսի պումագսէտէ մէպնի 1500 լիրա իհսան իթմիշ։

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ
Վառնա, Բ. Թաղ, թիւ 1104
ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՍՏԱՐՈՒԹԻՒՆ — ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐՈՒՄ ԵՆ
Մեր դրամատան մէջ ունինք հետեւեալ գրքերը՝ Հայերէն եւ Թուրքերէն տարբերութեամբ, մանաւանդ՝ դրամագրեր, դրամագրեր, գրամագրեր, գրամագրեր, գրամագրեր, գրամագրեր, գրամագրեր, գրամագրեր։

(*) Զոր դղում, որուն մէջ ըմպելիք կը դնեն։

Печат. Войниковъ, Варна.